ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 22-ի N 899-Ն որոշման համաձայն Երևանի Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք–Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը հայտարարում են մրցույթ ստորև թվարկված Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) համար:

հ/հ	Կազմակերպության կամ ՓԲ ընկերության անվանումը	Մրցույթ անցկացնելու օրը և ժամը
	Երևանի Աջափնյակ վարչական շրջան	**17.10.2017թ. Ժամը՝ 10:00**
1	«Երևանի հ.38 մանկապարտեզ» ՀՈԱԿ	
2	«Երևանի հ.42 մանկապարտեզ» ՀՈԱԿ	
3	«Երևանի Ա. Ցիցիկյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	
4	«Երևանի Մ.Միրզոյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	
5	«Մարաթուկ» մշակութային կենտրոն ՀՈԱԿ	
6	«Երևանի Աջափնյակի շախմատի դպրոց» ՀՈԱԿ	
7	«Աջափնյակ կանաչապատում» ՓԲԸ	
	Երևանի Ավան վարչական շրջան	**18.10.2017թ. ժամը՝ 10:00**
8	«Ավան–կանաչապատում » ՓԲԸ	
	Երևանի Արաբկիր վարչական շրջան	**19.10.2017թ. ժամը՝ 10:00**
9	«Երևանի Ալ.Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	
10	«Երևանի Արաբկիրի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
11	«Արաբկիր–Կամար» ՓԲԸ	
12	«Արաբկիր–Սերվիս» ՓԲԸ	
	Երևանի Դավթաշեն վարչական շրջան	**20.10.2017թ. ժամը՝ 10:00**
13	«Երևանի Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
14	«Երևանի Դավթաշենի շախմատի դպրոց» ՀՈԱԿ	
	Երևանի Էրեբունի վարչական շրջան	**23.10.2017թ. ժամը՝ 14:00**
15	«Տ.Չուխաջյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	
16	«Թ.3 մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ	
17	«Երևանի Էրեբունու շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
18	«Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ	
	Երևանի Կենտրոն վարչական շրջան	**24.10.2017թ. ժամը՝ 10:00**
19	«Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
20	«Երևանի Կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ	
21	«Երևանի Կենտրոնի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
22	«Կենտրոն–կանաչապատում» ՓԲԸ	
	Երևանի Մալաթիա–Սեբաստիա վարչական շրջան	**25.10.2017թ. ժամը՝ 10:00**
23	«Երևանի հ.87 մանկապարտեզ» ՀՈԱԿ	
24	«Երևանի Մալաթիա–Սեբաստիա շախմատի մանակապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	

	Երևանի Նոր Նորք վարչական շրջան	**26.10.2017թ. ժամը՝ 10:00**
25	«Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ	
26	«Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Ս.Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	
27	«Երևանի Նոր Նորքի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
28	«Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ	
29	«Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ	
30	«Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն» ՀՈԱԿ	
31	«Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ	
	Երևանի Նորք–Մարաշ վարչական շրջան	**27.10.2017թ. ժամը՝ 10:00**
32	«Ռ.Անդրեասյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	
33	«Երևանի Նորք–Մարաշի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
34	«Կանաչ Բարձրունք» ՓԲԸ	
	Երևանի Նուբարաշեն վարչական շրջան	**30.10.2017թ. ժամը՝ 14:00**
35	«Երևանի Նուբարաշենի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ	
36	«Երևանի Նուբարաշենի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
37	«Նուբարաշեն» ՓԲԸ	
	Երևանի Շենգավիթ վարչական շրջան	**31.10.2017թ. ժամը՝ 10:00**
38	«Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Կորյուն Նիկողոսյանի անվան մանկապատանեկան արվեստի կենտրոն» ՀՈԱԿ	
39	«Երևանի Ստ. Զրբաշյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	
40	Երևանի Շենգավիթ վարչական շրջանի «Պատանեկության ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ	
41	«Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 5 մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ	
42	«Երևանի Շենգավիթի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
43	«Երևանի Շենգավիթի նետաձգության մարզակումբ» ՀՈԱԿ	
44	«Շենգավիթ–կանաչապատում» ՓԲԸ	
45	«Երևանի Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	**10.11.2017թ. ժամը՝ 10:00**
	Երևանի Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջան	**01.11.2017թ. ժամը՝ 10:00**
46	«Անուշավան Տեր–Ղևոնդյանի անվան թ.1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	
47	«Զեյթուն մշակութային կենտրոն» ՀՈԱԿ	
48	«Երևանի Քանաքեռ–Զեյթունի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	
49	«Քանաքեռ–Զեյթուն բարեկարգում» ՓԲԸ	

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն վերը թվարկված պաշտոններն զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության գործունակ, չափահաս քաղաքացիները:

Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների (այսուհետ՝ Տնօրենների) ընտրության պարտադիր պայմաններն են՝

- բարձրագույն կրթություն
- վերջին տասը տարվա ընթացքում առնվազն 2 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ.
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ բաժնետիրական ընկերության Տնօրենի ընտրության համար, կամ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպության Տնօրենի ընտրության համար, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, Տնօրենի լիազորությունների շրջանակներին առնչվող համապատասխան ոլորտի օրենսդրություն, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հարկային օրենսդրություն, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք և այլ իրավական ակտեր).
- կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն

Տնօրենի ընտրության (նշանակման) լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն (տնօրենի պարտականություններն ամբողջական նկարագրված է տվյալ կազմակերպության կանոնադրությունում).
5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի հ.416-Ն հրամանով հաստատված հավելվածի 2-րդ բաժնի 2-րդ կետով նախադպրոցական ուսումնական հաստատության Տնօրենի պաշտոնը զբաղեցնողին ներկայացվում են այլ անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդհանրական պահանջներ:

* * *

Դիմող անձինք մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.
2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
3) քաղվածք աշխատանքային գրքույկից.
4) ինքնակենսագրություն.
5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
6) կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված).
7) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).
9) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

Անձը մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներն ապահովվում են թեստային առաջադրանքներով:

Ընդունել ի գիտություն, որ Տնօրենների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթներն անցկացվելու են Երևանի քաղաքապետարանի շենքում (Արգիշտի 1) ժամանակացույցով նախատեսված օրերին և ժամերին:

Փաստաթղթերն ընդունվում են Երևանի այն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի ընդհանուր բաժիններում, որի վարչական տարածքում գտնվում է տվյալ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը և Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունը՝ ամեն օր՝ աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը՝ 9.00-ից 18.00-ն (ընդմիջում՝ 13.00 – 14.00), բացի շաբաթ և կիրակի օրերից, հետևյալ հասցեներում՝

1. Աջափնյակ՝ Արա Սարգսյան 5, հեռախոս (011) 51-80-54.
2. Ավան՝ Խուդյակովի 222, հեռախոս (011) 51-81-37.
3. Արաբկիր՝ Ն.Զարյան 27, հեռախոս (011) 51-82-13.
4. Դավթաշեն՝ Դավթաշեն 3-րդ թաղամաս, հեռախոս (011) 51-82-81.
5. Էրեբունի՝ Սասունցի Դավթի 87, հեռախոս (011) 51-83-31.
6. Կենտրոն՝ Տերյան 44, հեռախոս (011) 51-84-63
7. Մալաթիա-Սեբաստիա՝ Սեբաստիա 32, հեռախոս (011) 51-85-92.
8. Նոր Նորք՝ Գայի 19, հեռախոս (011) 51-86-07.
9. Նորք–Մարաշ՝ Ա.Արմենակյան 272, հեռախոս (011) 51-87-08.
10. Նուբարաշեն՝ Նուբարաշեն 9-րդ փողոց, թիվ 4, հեռախոս (011) 51-87-31.
11. Շենգավիթ՝ Գ.Նժդեհի 26, հեռախոս (011) 51-88-11.
12. Քանաքեռ-Զեյթուն՝ Դավիթ Անհաղթ 11, հեռախոս (011) 51-88-63

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝ 13.10.2017թ.: